

Տարեկան գինը 10 բուրգի. կէս տարւում 6 բուրգ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисть, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է լ է Ֆ օ Ն № 253.

ՄԵԼԻԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առաջօրեայ).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր դառին 2 կոպէկ.
Տ է լ է Ֆ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԿԻՐ ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թարգմանական գրականութիւն. — Ներքին
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Գիւղական ուսուցիչ-
ներին. Նամակ Ալեքսանդրովից. Նամակ
Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐ-
ՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻ-
ՐԱԿԱՆ. Նամակներ Պարբերից.

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Վերջին տարիների ընթացքում ուսու-
սանքի մէջ սկսվելին երևալ մեծ քանակ-
ութեամբ թարգմանութիւններ ուսու-
նիչից եւ եւրոպական միւս լեզուներից:
Այդ թարգմանութիւնները կամ ծանո-
թացնում էին մեզ նշանաւոր հեղինակնե-
րի ստեղծագործութիւնների հետ, կամ
տալիս էին օգտակար եւ պիտանի ընթեր-
ցանութեան նիւթ: Այդպէս, վերջին տա-
րիներում մենք թարգմանեցինք Եփեսոսի
նշանաւոր ողբերգութիւնները, Սինկլիկի,
Էրեսի, Իոնի, Մոպսստի, կոմս Տո-
ստի եւ ուրիշ հեղինակների վիպական
գործերը, Զուգրամանի եւ Հաուստի-
նի դրամաները, բազմաթիւ գիտնական-
փորձարկան գրողների եւ մանրավէպեր:
Թարգմանական գրականութեան զարգա-
նալը զարթեցնում է շատերի մէջ մի հարց,
թէ արդեօք դրանով չէ՞ ծնւում եւ չէ՞
խեղդում ինքնուրոյն ստեղծագործու-
թիւնների եւ հեղինակութիւնների զար-
գացումը, թէ արդեօք այդ թարգմանու-
թիւնները չեն կատարում ի վնաս ինք-
նուրոյն գրականութեան:

Անկասկած, իւրաքանչիւր գրականու-
թիւն պէտք է ամեն ջանք դրած զնն
նպատակը ինքնուրոյն աշխատութիւնների
երևալուն, պէտք է կարողութիւն տալ

տաղանդներին զարգացնելու իրանց ընդու-
նակութիւնները եւ խրախուսող հանդիսա-
նայ նրանց համար թէ՛ բարոյական աջակ-
ցութեամբ եւ թէ՛ նիւթական օժանդա-
կութիւններով: Այդ ճիշդ է, բայց թարգ-
մանական գրականութիւնը այդպէս ոչ մի-
այն չի վնաս ինքնուրոյն գրականութեան
զարգացման, այլ եւ կարող է մեծապէս
նպաստել նրան:

Իհարկ է, պէտք է զգուշութեամբ եւ որոշ
սխտեմով ընտրութիւն անել այն գրքերից,
որոնք կան օտար գրականութեան մէջ եւ
թարգմանել այն, ինչ որ իսկապէս արժա-
նաւոր է, գեղարուեստական, տաղանդա-
ւոր եւ օգտակար: Երբ մի թարգմանական
գրականութիւն բաղկացած է Գէորգ-Բոր-
նի, Պոլ-Գե-Կոկի, Կապիլե-Գե-Մանուկեանի
եւ դրանց նման հեղինակների արկածա-
խնդրական եւ սիրազգիլու բովանդակից,
այն ժամանակ մենք կարող ենք ոչ միայն
չուրախանալ, որ հարստանում է մեր
թարգմանական գրականութիւնը, այլ եւ
պէտք է տխրենք ու ցաւենք:

Բայց եւրոպական հանձարների անմահ
ստեղծագործութիւնների թարգմանու-
թիւնները վաղուց ցանկալի կարիքներ են
մեր գրականութեան համար: Մեր երկրի մէջ
երևացող տաղանդաւոր ոյժերը մինչև այժմ
չեն կարողանում զարգանալ մասամբ
եւ այն պատճառով, որ նրանք չունեն
իրանց առաջ նմուշներ գեղարուեստական
եւ ուրիշ հեղինակութիւնների: Հայրենի
ինքնուրոյն գրականութիւնը թոյլ էր, իսկ
օտարն էլ անմատչելի էր:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Մի շատ բնորոշ փաստ կալ արձանագրված
«Новое Обозрѣніе» լրագրի մէջ: Ներկայումս

որտեղ կենտրոնացած են հանքային բանուոր-
ները եւ որոնք կորած են ծուխի եւ ցեղի
մէջ. այդտեղ աշխատող, բանուոր դասակարգն
էլ ենթարկված է դադանային ընդդէմի,
որոնք զարգացնում են հարեցող-
ութիւն, բարձր կատարել անկումն եւ
այլու Ապագան՝ դա «Բոկլէրն» է, որտեղ աշ-
խատանքի պայմանները փոխված են, եւ հե-
տեւապէս մարդկային ընդդէմը զարգանում
են դէպի լաւը, այսինքն կրում են հասարա-
կական համարաշարժութեան ոգին: Այս երկու
պատկերի շրջանակում է ընթանում այն
կեանքը, որ շարունակվում է շուրջ 75 տարի
«Աշխատանք» վեպում:

Լիւկ Ֆրոմանը «Անդունդ»-ի բանուոր դա-
սակարգը փրկելու նպատակով վճռում է ստեղ-
ծել աշխատանքի նոր պայմաններ, որտեղ
մարդկային բոլոր չարիքները ինքն ըստ ինքեան
կը ջնջան, չնորհիւ այն հանգամանքին, որ
հենց նրանց ծննդն ունեւորական-հասարակա-
կան պայմանները փոփոխված կը լինեն: Լիւկը
գնում է աշխատանքը այնպիսի ձևի տակ, որ
«աշխատանքը, տաղանդը եւ կապիտալը մի-
մեանից չը բաժանվեն», կազմեն մի ընկերակա-
ցութիւն կամ համաշխատակցութիւն (կոօպե-
րացիա). հետեւապէս, Լիւկի ծրագրով, աշխա-
տանքները տէր պիտի լինեն իրանց աշխա-
տանքի ամբողջ արդիւնքին եւ ոչ ոք սեփա-
կանացնելու չէ նրանց վաստակները: Իր բարե-
նորոգչական գործի սկզբում Լիւկը պատահում
է մի շարք անաշուղտութիւնների թէ՛ իրանց՝
բանուորների որոշ մասի եւ թէ՛ ուրիշների
կողմից: Ըստ երեւոյթին, զեռ երէկ «Անդուն-
դում» աշխատող բանուորները այնքան սովոր
են այնպիսի կեանքին, որ առաջին երեք
տարվայ ընթացքում նրանք չեն կարողանում
ինչպէս հարկն է, յարմարվել մարդկային
պայմաններին. նրանց ստրկական անցեալը
մերթ ընդ մերթ, որպէս կօշմար, երեւում է
նրանց եւ դէպի ինքն է կոչում: Լիւկի միւս
խոչընդոտներն են շրջակալ խանութպանները,

Թիֆլիսի արքունական թատրոնում ներկայա-
ցումներ է տալիս Լիւկիվիցովի դրամատիկական
խումբը: Մի թատրոնատէր, տեսնելով որ վրաց
մամուլի մէջ ոչինչ չէ խօսվում այդ ներկայա-
ցումների մասին, հետաքրքրվել է իմանալ դրա
պատճառը եւ դիմել է իր ծանօթ վրաց մի
խմբագրութեան: Եւ ահա ինչ է նա իմացել:

Իմ ստացած պատասխանը լիալէս բա-
ցատրեց թիւրիմացութիւնը. բանից դուրս է
գալիս, որ «ուսուսաց դրամատիկական զերա-
սանքների ընկերութիւնը» զրկել է տեղական
լրագիրները արքունական թատրոնում նրանց
ունեցած ձրի տեղերից. մինչդեռ թատրոնի
գերեզման միշտ տալիս էր նրանց ձրի տե-
ղեր, ինչպէս տալիս էր ուսուսանչ հրատա-
րակութիւններին: Ինչ չափազանց օտարոտի
է թուում ուսուսաց խմբի այսպիսի վճիռը. բա-
նի որ նա չա՛ն ունի, որ ուսուսանչ դրա-
ման տեղգիրների մէջ էլ տարածվի: Եւ ա-
նապարհութիւն էլ է, որովհետեւ թատրոն
յաճախողների կէտը, եթէ ոչ աւելին, բաղ-
կացած է հենց այն լրագիրների ընթերցող-
ներից, որոնց այնքան օտարոտի կերպով
անտես է անում պ. Լիւկիվիցովի: Աւելորդ չեմ
համարում հրապարակ հանել եւ այն, որ
վրաց խմբագրութիւնները դիմել են պ.
Լիւկիվիցովին՝ այդ օտարոտի կարգադրու-
թիւնը բացատրելու համար, բայց նա ինչ-որ
պատճառով չէ կամեցել նոյն իսկ պատաս-
խան էլ տալ:

Պարզ ենք համարում աւելացնել, որ
«Մշակի» խմբագրութիւնն էլ ճիշտ մի եւ նոյն
գրութեան մէջ է, ճիշտ մի եւ նոյն կերպով
արձանագրված է պ. Լիւկիվիցովի կողմից: Մենք
էլ արքունական թատրոնում ունենք մշտա-
կան տեղ, որ ամեն սեզօնի սկզբում յատկա-
նում էր մեզ թատրոնի գերեզմանը: Եւ պ.
Լիւկիվիցով եւ չը բարեհաճեց ընդունել, որ
Թիֆլիսում հրատարակվում են լրագիրների եւ
հայերէն ու վրացերէն լեզուներով: Այդ վար-
մունքը ինքն ըստ ինքեան մի լաւ յանձ-
նարարական է պարոնի մասին: Պ. Լիւկ-
վիցով չէ բարեհաճում տեղական լեզու-
ներով հրատարակվող լրագիրներ ընդունել:

գիւղի քահանան, ուսուցիչը, դատաւորը եւ
այլն: Բթմատութիւնը եւ տարտիւֆութիւնը,
ձեռք ձեռքի առած, ամենայն յամառութեամբ
չեն ուզում հատկանալ, որ աշխարհը մի կէտի
վրայ չէ կանգնած: Լիւկի մանկութիւնը, թէ՛
բարոյապէս եւ թէ՛ նիւթապէս, մոտենում է.
լինում են օրեր, երբ Լիւկը բոլորովին վնաս-
վում է: Սակայն նրա ընկեր գիտնական Ժօ-
րանը բացատրում է ամեն մի նոր գործում
պատահած առաջին դժուարութիւնները եւ
նորից կարողանում է ոգեւորել Լիւկին, ցոյց
տալով գաղափարական աշխատանքի ամբողջ
վեհութիւնը:

«Աշխատանք» է, ասում է Ժօրանը, որ
մարդուն կենդանացնում, ուժեղացնում, եր-
ջանկացնում է: Ինչպիսի երջանկութիւն է
հաւատ ունենալ դէպի այն աշխատանքը, որով
յուսով եւ մի նոր աշխարհ ստեղծել մարդկանց
համար: Պէտք է ամեն օր մի մի քար աւե-
լացնել եւ յուշարձանը արդէն հիմնված է. եւ
նրան կը բարձրացնեն այնքան բարձր, որքան
միայն կեանքը թոյլ է տալիս: Երբեք չը պէտք
է ձգել այն աշխատանքը, դէպի որը տածում
էս հաւատ, թշկուղ նա քո կեանքը պահանջէ:
Աշխատանքը, որ մարդու նպատակն է դառ-
նում, նորածին երեխայ է. նա մեր արիւնից,
մեր մտից է, մեր մտաւոր ու բարոյական ոյժի
արդիւնքն է. ինչպէս մայրը շատ անգամ մեռ-
նում է իր երեխայի աշխարհ գալու ժամանակ,
մենք էլ պէտք է պատրաստ լինենք մեռնելու
մեր աշխատանքի, մեր «երկի» համար—եթէ
միայն պահանջվում է, որ ծնվի:

Վերջապէս, երեք-չորս տարուց յետոյ լաւ
օրերը սկսվում են: Գործարանները սկսում
են մեծ արդիւնք բերել. նրանք մեծանում
են եւ լայնանում. շրջակա գործարանների
բանուորները զաղթում են «Բոկլէր» եւ ընկե-
րանում են Լիւկի հետ: Հիմնվում են դպրոց-
ներ, մանկական պարտէզներ եւ բանուորների
համար կրթիչ հաստատութիւններ. տները
շրջապատվում են ծառերով ու ծաղիկնե-

եւ այդ լրագիրներն էլ կարող են պ. Լիւկի-
ցովին ու նրա խումբը չընդունել, ինչպէս էլ
անում են, քանի որ ոչ մի տեղական լրագ-
րում չէ տպագրվում բէջնիկա նրա ներկա-
յացումների մասին: Այսպիսով էլ կը վերջանայ
ամեն ինչ. պ. Լիւկիվիցով ժամանակաւոր հիւր է
մեզ մօտ, կը գնայ եւ մի ուրիշ կը գայ, որ կը
ձանաչէ տեղական մամուլը, ինչպէս ձանաչում
էր երեք տարի առաջ Թիֆլիսում ներկայացում-
ներ տուող պ. Կօրչը, որ շատ սիրալիկ կերպով
էր վերաբերվում տեղական մամուլին:

ԳԻՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՆԵՐԻՆ

«Մշակի» այս տարվայ № 29-ի մէջ տպված
էր մի յօդուած՝ «Ինչքան ենք մօտ ժողովրդին»
վերնագրով: Յօդուածագիրը հրաւեր է կար-
գում մեր ինտելիգենցիային՝ մօտենալ ժողով-
րին, նրա ձեռքը տալ զենքեր գոյութեան կռի-
ւի մէջ աշող մարտնչելու համար: Այդ ինչ զեն-
քեր են. թւենք մի քանիսը:

Վախառուն անպատիժ ծծում է աղքատ
գիւղացու արիւնը: Զրկված օրէնքին անտե-
ղեակ է, նա մինչեւ անգամ չը գիտէ հասա-
րակ մուրհակ գրել, որից օգտվելով վախա-
ռուն, ուղեցածին պէս, մոցնում է պայմանների
մէջ գանազան կեանք, որոնց մասին նախօրօք
խօսք էլ չէ լինում եղած: Շատերը կան, որ
նոյն իսկ տեղակալ ին տոկոսների քանակու-
թեան օրինական սահմանին իսկ զբէ զենքեր
են պատահել, որ գիւղացին բանալ է ընկել,
սուգանք է վճարել, մի խօսքով գրկանքներ է
կրել միայն այն պատճառով, որ չէ գիտացել,
որ հակառակորդի պահանջները ապօրինի են:

Ուրեմն ահա մի զենք—օրէնք—որը եթէ
ունենայ գիւղացին, արդէն իսկ թեւ առած կը
լինի իսկ հիվ պիտի սովորեցնէ նրան օրէնք,
եթէ ոչ ուսուցիչը: Ամեն մի բանիմաց գիւղա-
կան ուսուցիչ կարող է ամենահասարակ օ-
րէնքների հետ ծանօթանալ, անգիր անել, գի-
րով. բանուորները օրական աշխատում են
ընդամենը 7—8 ժամ, նրանց ընտանիքները
բազմաթիւ են: Այդ համաշխատակցութիւնը
օրինակ է դառնում նաեւ մօտակալ հողագործ
գիւղացիների համար, որոնք նոյնպէս համա-
խմբվում են եւ մի եւ նոյն հիմունքների վրա
են դնում երկրագործութիւնը: Անցնում են
30—40 տարիներ. նոր սերունդ է երեւան գա-
լիս, աւելի դուրաթի, աւելի առողջ: Առատու-
թիւնը եւ հարստութիւնը սահման չունեն եւ
այդ բոլոր պատկանում է ամենքին: Աշխա-
տանքը դարձել է մարդու օգնող-ընկերը եւ ոչ
թէ նրա տէրը եւ հրամայողը. հակառակ նախ-
կին ժամանակներին՝ մարդը այլ եւս աշխա-
տանքի ստրուկ չէ: «Բոկլէրի» շրջապատ աշ-
խարհը կամաց կամաց փոխվել է. զինուորա-
նոցը գոյութիւն չունի. բանուր փակվել է, ո-
րովհետեւ չը կան այլ եւս զօրքը, որ բանտար-
կեն, որովհետեւ չը կան այլ եւս աշխատան-
քից զրկված եւ քաղցած մարդիկ: Տարեւան
գիւղի եկեղեցին էլ թէւ ոչ ոք ձեռք չէ տուել
նրան, ինքը փակվել է, այլ եւս ոչ ոք չէ յա-
ճախում այնտեղ: Մարդկանց հաւատը դարձել
է—փոխադարձ վեր եւ համարաշարժութիւն, որը
նրանք իրանց օգտակար են առողջարար աշ-
խատանքի միջոցով իրագործում են ամեն օր:
Ֆիզիքական եւ քիմիական նոր գիւտերը աւե-
լի եւս օգնում են «Բոկլէրի» ընակիչներին՝
յօղթել եւ սանձահարկ ընտելեան ոյժերը եւ
մի եւ նոյն ժամանակ առատաշուն իրանց հա-
րստութիւնը: Այդովում է արեւի արձակած
ջերմութիւնը ժողովել երկաթէ բարձր ամբար-
ներում, որտեղից կարելի է լինում գիշերը
լուսաւորութեան աղբիւր ստանալ եւ նոյնպէս
գործածել գործարանների պէտքերի համար.
այլ եւս չոգեկամութիւն պէտք չը կայ, պէտք
չը կայ նոյնպէս եւ ածուխի: Մարդիկ աշխա-
տում են ընդամենը 3—4 ժամ օրական, իսկ
մնացած ժամերը վայելում են, ով ինչպէս կա-
մենայ. զբաղվում են գեղարուեստով եւ գի-
տութիւններով, որոնք խիստ առաջ են գնա-

